

ԲԱՅՆՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՍԴԱՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Հ. Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Վերջին տասնամյակներում հայ լեզվաբանության մեջ որոշակի աշխատանք է կատարվել արդի հայերենի կառուցվածքի համակողմանի ուսումնասիրության բնագավառում, լույս են տեսել արժեքավոր հետազոտություններ հնչյունաբանության, բառագիտության, ձևաբանության, շարահյուսության, նաև ոճաբանության վերաբերյալ, հրատարակվել են այդ ուսումնասիրությունները ընդհանրացնող գրքեր, ձեռնարկներ: Երբ քննական հայացքով իմի ենք բերում կատարված աշխատանքը, պարզվում է, որ դեռևս կան այնպիսի հարցեր, հիմնահարցեր, որոնք սպասում են ուսումնասիրության: Նկատի ունենք առկա մենագրությունների մեծ մասին բնորոշ մի առանձնահատկություն՝ հարցերը քննված են առանձին-առանձին, հիմնավորապես բացահայտված չեն լեզվի համակարգային բնույթը, նրա առանձին կողմերի, մակարդակների կապն ու փոխալսյամանավորվածությունը: Այս կապն ու փոխկապակցվածությունը բացահայտող հիմնահարցերից մեկն է խոսքի մասերի ներսում իմաստային դասդասումը և դրա հիմքի վրա բառերի կապակցական առանձնահատկությունների քննությունը, քանի որ դրանով մի կողմից որոշակի պատկերացում կունենանք ենթախոսքիմասային իմաստների, իմաստային խմբերի մասին, մյուս կողմից կբացահայտվեն լեզվի համակարգին բնորոշ այնպիսի հարցեր, ինչպիսին են բառիմաստը և բառի կազմությունը, բառիմաստը և դրանով պայմանավորված ձևաբանական ու շարահյուսական-կապակցական առանձնահատկությունները:

Իհարկե, չենք կարող ասել, թե խոսքի մասերի իմաստային դասդասումը առհասարակ անուշադրության մատնված հարց է: Այդպիսի դասդասումներ առկա են նույնիսկ դասագրքերում, բայց դրանք շատ են ընդհանուր, չեն ընդգրկում ավյալ խոսքի մասին պատկանող բառերի բոլոր իմաստային խմբերը, դասդասմուն ելակետը մեծ մասամբ շարահյուսական է: Իսկ բայերի իմաստային որոշ խմբեր նշված են շարահյուսական աշխատություններում:

Հայերենի քերականական համակարգում բայն առանձնահատուկ տեղ ու դեր ունի: Նկատի ունենք բայերի որոշակի տեսակարար կշիռը հայերենի բառապաշարում, նրա իմաստային բազմադանությունը, քերականական ձևերի առատությունը, կառուցողական, կարգավորող դերը նախադասության կառուցվածքում, կապակցական արտակարգ կարողությունը, հաղորդակցական արժեքը: Այս առումով էլ բայերի իմաստային խմբավորումը և խմբերի կապակցական առանձնահատկությունների քննությունը համարում ենք կարևորագույն ու հրատապ հարց, որը կբացահայտի բառիմաստի և շարահյուսական-կապակցական կարողության, մասամբ նաև ձևաբանության կապն ու փոխալսյամանավորվածությունը:

Ինչպես նշեցինք, բայերի իմաստային խմբավորման օրինակներ կան շարահյուսական աշխատություններում՝ սկսած Հ. Քոնեցու «Յաղագս քերա-

կանին» գրքից: Այդպիսի օրինակներ կան Ա. Այտընյանի, Մ. Արեղյանի, Վ. Առաքելյանի, Մ. Ասատրյանի, Ս. Գյուլբուրադյանի, Ռ. Իշխանյանի, Վ. Քոսյանի և ուրիշների աշխատություններում, «Ժամանակակից հայոց լեզու» ակադեմիական հրատարակության հրրորդ գրքում: Բայերի իմաստային որոշ խմբերի ու նրանց կապակցական առանձնահատկությունների մասին գրել են Հ. Օհանյանը, Ժ. Մանուկյանը:

Իմաստաբանությունը առհասարակ չի եղել հայ լեզվաբանների հատուկ ուսումնասիրության առարկա, և մեզ հետաքրքրող հարցի տեսանկյունից բացառություն է Գ. Զահուկյանի «Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն» գիրքը (1989 թ.), որտեղ առանձին բաժին նվիրված է խոսքի մասերի իմաստաբանությանը: Բայերի իմաստները քննելիս ու վերլուծելիս Գ. Զահուկյանը ելել է բայարմատների իմաստաբանությունից և թեև նշել է բազմաթիվ իմաստներ, բայց չի ընդգրկել բոլոր բայերը:

Հարկ է նշել, որ բայերի իմաստային խմբավորման ելակետը, սլայմանավորված ուսումնասիրության նպատակով, խնդիրներով, բնույթով, սովորաբար շարահյուսական է, բացառությամբ Գ. Զահուկյանի, Հ. Օհանյանի, Ժ. Մանուկյանի քննությունների: Քննելով նախադասության անդամները, խընդիրները, ինչպես նաև հոլովների շարահյուսական կիրառություններն ու բառակապակցությունները՝ ուշադրության կենտրոնում պահել են նախադասության անդամը, հոլովը, ապա թվարկել են այն բայերը (իմաստային խումբ), որոնք կարող են առնել այս կամ այն խնդիրը, այս կամ այն հոլովը, հաճախ էլ թվարկվում են բայեր, առանց նրանց ընդհանուր իմաստը նշելու: Նույն բայը երբեմն հիշատակվում է տարբեր խմբերում ոչ թե այն պատճառով, որ բազմիմաստ է և կարող է առնել տարբեր լրացումներ, այլ այն, որ բազմարժեք է, և չի երևում, թե իմաստային որ խմբի բայերը քանի և ինչպիսի լրացումներ կարող են առնել: Փաստորեն խմբավորումները չեն ընդգրկում բոլոր բայերը և ամբողջական պատկերացում չեն կարող տալ բայերի իմաստային խմբերի մասին:

Այս ամենով հանդերձ, չենք կարող շխտատվանել, որ կատարված է որոշակի աշխատանք (հատկապես Գ. Զահուկյանի կողմից), մշակվել են սովանդներ, հարցն անուշադրության մատնված չէ, որի վրա էլ հենվելով կարելի է կատարել հայերենի հազարավոր բայերի իմաստային դասդասում և ցույց տալ իմաստային խմբի մեջ ընդգրկված բայերի կապակցական սուանձնահատկությունները, բացահայտել կապակցական կարողությունները, բարիմաստի և սեռի, բառիմաստի և կապակցականության անմիջական պայմանավորվածությունը:

Գանք մեր հիմնական հարցին. ինչպե՞ս, ի՞նչ սկզբունքներով կարելի է կատարել բայերի իմաստային դասդասումները և պարզել նրանց կապակցական առանձնահատկությունները:

Բառերի իմաստների մասին խոսելիս սովորաբար տարբերում են երկու կարգի իմաստ՝ բառային և քերականական, և չի առանձնացվում ներխոսքիմասային իմաստը, թեև խոսքի մասերի ներսում կատարվող իմաստային բաժանումները փաստորեն հենց ներխոսքիմասային են, որոնք կոչվում են իմաստային, իմաստային-քերականական դասեր, խմբեր: Հիշենք, որ բառային (բառական) իմաստը մասնավոր է, հատուկ մեկ բառի, քերականականը ընդհանուր է, բնորոշ տվյալ խոսքի մասի մեջ մտնող բոլոր բառերին: Բառային իմաստը բնորոշ է բառին՝ անկախ նրա քերականական ձևից (հոլովված, իոնարձված), քերականականը նույնպես կարող է բնորոշ լինել բառին՝ անկախ քերականական ձևից: Այդպիսին է խոսքիմասային իմաստը, որ սուկա է բառի բոլոր ձևերում: Քերականական մյուս իմաստները՝ թվի, դեմքի,

ժամանակի, եղանակի, հոլովի առկայացման և այլն, քերականական ձևերին բնորոշ իմաստներ են:

Ներխոսքիմասային կամ ենթախոսքիմասային իմաստը միջին տեղ է զբաղում բառականի ու քերականականի միջև. այն բառային չէ, քանի որ բնորոշ է ոչ թե մեկ բառի, այլ բառերի շարքերի, խոսքիմասային էլ չէ, որովհետև բնորոշ չէ տվյալ խոսքի մասի մեջ մտնող բոլոր բառերին: Իհարկե, այս երեք կարգի երեք տարբեր վերացության արդյունք իմաստներն իրարից մեկուսացած չեն, առկա են մասնավորի և ընդհանուրի փոխհարաբերություն:

Ուրեմն՝ ներխոսքիմասային կոչում ենք այն իմաստը, որը բնորոշ է տվյալ խոսքի մասի մեջ մտնող բառերի առանձին խմբերի, շարքերի, ինչպես, օրինակ, ասացական իմաստը, որ բնորոշ է ասել, պատմել, խոսել, զուցել, վկայել և այլ բայերի, բայց ոչ կանգնել, նստել, լուսանալ, ծեծել, պակասել բայերին:

Բայերի շարահյուսական կապակցականության մեջ որոշակի դեր ունեն և՛ բառային, և՛ ներխոսքիմասային, և՛ խոսքիմասային իմաստները: Բայերն ունեն կապակցական կարողություն, որը կոչվում է արժույթ: Արժույթը փաստորեն բառային, ներխոսքիմասային և խոսքիմասային իմաստների շարահյուսական-կապակցական դրսևորում է, որն արտահայտվում է հետևյալ ընդհանուր օրինաչափություններով. նույն խոսքի մասի մեջ մտնող բառերն ունեն կապակցական բազմաթիվ ընդհանրություններ, առնում են նույն լրացումները, որը նրանց խոսքիմասային իմաստի արտահայտություն է, ունեն նաև տարբերություններ, որոնք պայմանավորվում են բառական իմաստների տարբերություններով. կապակցվող բառերը պետք է ունենան իմաստային համատեղելիություն, զուգորդելիություն (սիրել խաղաղություն, խնձոր և ուտել խնձոր, բայց ոչ խաղաղություն) նույն խոսքի մասին պատկանող բառերի կապակցական տարբերությունները ոչ միայն բառական իմաստների տարբերության հետևանք են, այլև ներխոսքիմասային իմաստների, և շարահյուսական աշխատություններում բայերի խմբերի առանձնացումը, նրանց լրացում-խնդիրների թվարկումը հենց այդ երևույթի արտահայտություն է:

Նշանակում է, բայերի խմբավորումը ըստ ներխոսքիմասային իմաստների և նրանց վերլուծությունը ինքնին ենթադրում են նաև նրանց կապակցական առանձնահատկությունների քննություն, այլապես դասդասումը չի ունենա քերականական արժեք:

Հայտնի է, որ աշխարհը, առարկաները, երևույթները, հասարակական անցուղարձը ուսումնասիրում են բազմաթիվ գիտություններ և յուրաքանչյուր գիտություն կատարում է բաժանումներ, դասդասումներ, խմբավորումներ: Ավելին, նույն գիտության տարբեր ճյուղեր, բաժիններ, հոսանքներ նույնպես կատարում են տարբեր բաժանումներ, որոնք ելնում են տվյալ գիտության, բաժնի նպատակներից, խնդիրներից, բնույթից, և դրանք օգնում են աշխարհը տարրորոշված, ավելի քան քննելուն ու ճանաչելուն:

Պարզ է, նույնը վերաբերում է և լեզվաբանությանը. և՛ բառագիտությունը, և՛ ձևաբանությունը, և՛ շարահյուսությունը ուսումնասիրում են բառը, բայց տարբեր տեսանկյուններից և կատարում են բառերի տարբեր խմբավորումներ, թեև, ինչպես ասացինք, չկան ընդհանրացնող այնպիսի աշխատություններ, որոնք բացահայտեին մի կողմից բառի իմաստային ու բառակազմական առանձնահատկությունների դերը ձևաբանական և շարահյուսական համակարգում, մյուս կողմից բառի ձևերի և շարահյուսական կապակցելիության փոխհարաբերությունը¹:

¹ Թերևս քացառություն է Ս. Արբաբամյանի «Զթեքվող խոսքի մասերը և նրանց բա-

Ուրեմն՝ բայերի իմաստային դասադասումները և խմբերի կապակցական առանձնահատկությունների քննությունը պարզում է այն հիմնահարցը, թե ինչքանով է դեր խաղում խմբի ընդհանուր իմաստը բայերի շարահյուսական կապակցություններում, և դրանով կրացահայտվի, թե բայերի իմաստային խմբավորումը սոսկ իմաստաբանություն է, թե նաև ունի քերականական արժեք: Նկատի պիտի ունենանք նաև հետևյալը. բայերի իմաստաբանական դասակարգման հետ նրանց կապակցական առանձնահատկությունների քննությունը պայմանավորվում է բայերի իմաստային մի յուրահատկությամբ: Ինչպես նշում է Պ. Պողոսյանը, ի տարբերություն գոյականի, բայերը «իրենց իմաստային կոնկրետությունները լեզվում ստանում և խոսքում արտահայտում են գոյականների հետ ունեցած կապակցության հետևանքով»²:

Բայերի իմաստային խմբավորման համար կարող են լինել տարբեր ելակետեր, մոտեցումներ, սկզբունքներ:

Ա. Ելնել այն իրողությունից, որ բայերը ցույց են տալիս առարկաների գործողություններ, և առարկաների անուններն էլ երկու հիմնական իմաստային-քերականական դասի են ըստանվում՝ անձի և իրի, հետևաբար բայերն էլ կարելի է բաժանել ըստ անձի և իրի գործողություններ ցույց տալու հատկության, ապա շարունակել աստիճանական բաժանումը և առանձնացնել անձի ֆիզիկական, մտավոր ու հոգեկան գործողություններ անվանող բայեր: Կարելի է նկատի ունենալ նաև կենդանի և ոչ կենդանի էակների գործողությունները:

Բայց առաջին հայացքից տրամաբանական թվացող այս խմբավորումը իրականում թերի է, միակողմանի և ոչ նպաստակահարմար, քանի որ դասական ելակետը ոչ թե գործողության իմաստն է, այլ գործողությունը կատարող առարկան, և կունենանք սոսկ ենթակայի ու գործողության հարաբերության հիման վրա կատարված խմբավորում, որը բայի կապակցական կարողության միայն մեկ կողմի քննություն է: Այնուհետև. կան բաղմամբով բայեր, որոնք բացարձակ նույն իմաստով կարող են ընդգրկվել ստորերև խմբերում (չարդել, դեղնել, կորչել, շարժել, օրորել, մեծանալ, հասնել, միանալ և այլն):

Բ. Հետևել հայերենի շարահյուսական աշխատություններում ընդունված սկզբունքին, այն է՝ բայերը խմբավորել ըստ այս կամ այն հուլովով արտահայտված լրացումներ, խնդիրներ առնելու կարողության: Այս սկզբունքով էլ առաջնորդվել չենք կարող, քանի որ ելակետ են դառնում լրացումները, որը ոչ թե պատճառ է, այլ հետևանք, անտեսվում է ենթական, և խմբավորման ելակետը նորից բայիմաստը չէ, որը հակասում է մեր նպատակին:

Գ. Ելակետ ունենալ Գ. Զահուկյանի իմաստաբանական դասակարգման սկզբունքները: Ինչպես ասացինք, նա դասակարգման առարկա է դարձրել բայական արմատների իմաստի քննությունը, և ինչպես նշում է, «... բայիմաստների այսպիսի քննությունը հաճախ ոչ այլ ինչ է, եթե ոչ բայարմատների հետ համընկնող գոյականների, ածականների ու այլ խոսքի մասերի քննություն»³: Ըիշտ է, բայերի մեջ որոշակի զգացվում է արմատական իմաստը, բայց համենայն դեպս բայարմատին համընկնող խոսքի մասը և բայը

ուսկան ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում» աշխատությունը, Եր., ԳԱ, 1985:

² Պ. Պողոսյան, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, ԵՃ հրատ., Եր., 1990, էջ 227:

³ Գ. Զահուկյան, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բուսակազմություն, ԳԱ հրատ., Եր., 1989, էջ 49:

տարբեր բառեր են, հետևաբար տարբեր բառական իմաստով, իսկ բայեր էլ կան, որոնց արմատական իմաստը հնարավոր է պարզել միայն ստուգաբանության մեջ, որը բուրժուական ալլ հարց է: Եթե նկատի ունենանք նաև այն, որ Գ. Զահուկյանի դասակարգումը ընդգրկում է ոչ բուրժուական բայերը, և գրեթե անտեսված է բայերի կապակցականությունը, որը դասակարգման կիրառական ոլորտն է, ապա պարզ կդառնա, որ հիշյալ դասակարգումը հարմար չէ մեր նպատակադրմանը, և դասակարգման այդ սկզբունքներով սուսաշնորդվել չենք կարող, թեև արժանին պիտի հատուցել լեզվաբանին նուրբ և ուշագրավ դասակարգումների համար և բայերի իմաստային խմբավորումներ կաատրելիս պրանք անույալման նկատի պետք է ունենալ:

Գ. Բայերը խմբավորել որպես նյութական որոշակի իմաստի կրողներ՝ նկնելով նրանց ցույց տված գործողության բնույթից, կատարելով իմաստային-թեմատիկ դասակարգում, իմաստային ընդհանրություններ ունեցող բայերը խմբավորել իբրև առանձին խումբ, ապա քննել այդ խմբի բայերի կապակցական առանձնահատկությունները, սկսել «ընդհանուր գոյությունակառուցում իմացաբանական հարցերից և, լեզվական հարցերը դիտելով որպես այս հարցերի մի ածանցյալը, փորձել բացատրելու վերջիններիս առաջինների միջոցով»⁴: Ավելացնենք, որ այս գեպում լեզվականը մենք հասկանում ենք շարահյուսական-կապակցականը:

Սակայն այս սկզբունքով էլ առաջնորդվելիս բայերի իմաստային դասակարգման խնդիրը հեշտությամբ չի լուծվում, և պիտի պարզենք բաժանման իրացմանը առնչվող մի շարք այլ հարցեր:

1. Հայտնի է, որ իբրև բառեր բայերն աչքի են ընկնում ոչ միայն քանակով, այլև բազմիմաստությունով, փաստորեն բազմիմաստ բառեր են: Կան բազմաթիվ բայեր, որոնք ունեն 10-ից ավելի իմաստներ (տալ, քաշել, պահել, տանել, հանել, դնել, բռնել, անցնել, նստել և այլն): Առաջին հայացքից թվում է, թե պետք է նկատի ունենանք բուրժուական իմաստները և նույն բայն ընդգրկենք իմաստային այնքան խմբերում, ինչքան իմաստներ ունի: Բայց բազմիմաստության ուշադիր վերլուծությունը բացահայտում է այլ պատկեր և այս ընդգրկումից աղատվելու հնարավորություն է տալիս:

Բնույթի բազմիմաստների որոշակի տարբերակում կա. տարբերում ենք հիմնական, առաջնային, առանցքային և երկրորդական ու փոխաբերական, ինչպես նաև հնացած, բարրառային և այլ իմաստներ: Պարզ է, ելակետը պիտի լինի առաջնային, հիմնական իմաստը, որի մեջ սովորաբար առկա է լինում բայահիմքի՝ արմատի իմաստը: Գործը հեշտանում է նրանով, որ մեկից ավելի իմաստները հաճախ նույն ընդհանուր, առանցքային իմաստի գրսևորումներ են համանշային երանգներով, հետևաբար բուրժուական իմաստներով բայը կլինի նույն խմբի անդամ: Օրինակ. բարձրաձայն բայի բուրժուական իմաստների մեջ կա ընդհանուրը, առանցքայինը՝ ցածից, ներքևից վեր, վերև գնալ: Քոչել բայն ունի 21 իմաստ, և առաջինն ու հիմնականը «թևերի օգնությամբ գնալ, տեղափոխվել, մի տեղից մյուսը փոխադրվել», այսինքն՝ հիմնականը, առանցքայինը գնալ, տեղափոխվել, շարժվելն է, որ առկա է բուրժուական իմաստների մեջ, նույնիսկ պաշտոնից հանել, ընկնել, կորչել, անհետանալ:

Կան այնպիսի բայեր էլ, որոնք արտահայտում են իրարից բուրժուական տարբեր իմաստներ, այնպիսի իմաստներ, որոնք լեզվի զարգացման տվյալ փուլում երբեմն իրար հետ գրեթե կապ չունեն: Նման բայերը, բնականաբար, պետք է ընդգրկվեն համապատասխան իմաստային խմբերում: Օրինակներ. ակադ. է. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում»

⁴ Նույն տեղում, էջ 18:

արձանագրված է անցնել բայի 31 իմաստ: Դրանց համեմատությունը պարզում է, որ այդ իմաստները կարելի է խմբավորել երկու հիմնական իմաստի մեջ՝ ա) գնալ, շարժվել, հեռանալ, գերազանցել, բ) ուսումնասիրել, սովորել, հետևաբար անցնել բայը պետք է ընդգրկել իմաստային երկու խմբում: Իհարկե, կան այլ իմաստներ էլ, որոնք տիպական չեն, տարածված չեն, բարբառային են: Բաժանել բայն ունի 16 իմաստ: Մի կողմ թողնելով օտարամուտ, հայերենին ոչ բնորոշ իմաստները (մասնակից լինել, հաղորդակից լինել), մնացած 14 իմաստը կարելի է բաժանել երկու հիմնական, սուսնցքային իմաստի՝ ա) անչատել, զատել, ջոկել, բ) տալ, բաշխել, ցրել: Նշանակում է, բաժանել բայը պետք է ընդգրկվի ոչ թե 16 կամ 14, այլ իմաստային երկու խմբում:

2. Կա իմաստային մի ուրիշ առանձնահատկություն. բազմաթիվ բայեր ունեն բնորոշ, տարածված, առաջնային իմաստ և դրանով համապատասխան իմաստային խմբի անդամ են, բայց միաժամանակ ունեն իմաստային այնպիսի երանգ, որն էլ բայը դարձնում է իմաստային այլ խմբի անդամ: Օրինակ. հրավայել բայը ասացական խմբի անդամ է (ինչպես ասել, պատմել, խոսել, հաղորդել, զրուցել և այլն) և կարող է առնել մասին կապով լրացում, բայց միաժամանակ նրա մեջ ասացականի հետ կա դրդման, հարկադրման իմաստ՝ ասել հարկադրելով, դրդելով, որով էլ դառնում է դրդման, հարկադրման բայերի խմբի անդամ (պահանջել, հարկադրել, ստիպել, կարգադրել, առաջարկել և այլն), առնելով անորոշ դերբայով լրացում: Բայն ունի իմաստային լրացուցիչ այլ երանգ. հրամայելը միաժամանակ կամային գործողություն է, հետևաբար պիտի ընդգրկվի նաև կամքի, ցանկություն բայերի իմաստային խմբում:

Այլ օրինակներ բերելու հարկ չկա: Ընդհանրացնենք. եթե բազմիմաստ բայն արտահայտում է իրար հետ կապ չունեցող, բոլորովին տարբեր իմաստներ կամ միաժամանակ արտահայտում է տարբեր իմաստներ, ապա պետք է ընդգրկվի իմաստային տարբեր խմբերում: Իսկ եթե բոլոր իմաստները նույն ընդհանուր, առանցքային իմաստի դրսևորումներ են, համանշային երանգներ, ապա բայը պիտի ընդգրկվի իմաստային մեկ խմբում:

3. Բառի իմաստը ընկած է համանիշների տարբերակման հիմքում: Համանիշներն անվանում են նույն հասկացությունը, ունեն նույն կամ մոտ իմաստներ և կարող են տարբերվել ոճական կիրառությամբ, հուզարտահայտչական գունավորմամբ, արտահայտած վերաբերմունքով, ինչպես նաև դրժածականությամբ: Պարզ է, համանիշները կազմում են իմաստային առանձին խումբ: Բայց եթե բայերի իմաստային խմբավորման ելակետ ընդունենք բայերի համանշությունը, ապա կունենանք իմաստային այնքան խմբեր, ինչքան համանիշների շարքեր կան: Այս ելակետից բայերի իմաստային խմբավորումը գործնականում կդառնար անհնար, քանի որ շատ-շատ են համանիշների շարքերը: Բայերի իմաստային խումբ հասկացությունը մեկ համար ավելի լայն է, ընդգրկուն, որի մեջ առանձին ենթախումբ, շարք կարող են կազմել համանիշները: Ասածը ցույց տալու համար բերենք ասացական բայերի օրինակը:

Ասացական բայերը կազմում են իմաստային առանձին, բավականին բազմանդամ խումբ, որի մեջ մտնում են մի քանի տասնյակ բայեր՝ համանշային տարբեր շարքերով, և գրեթե բոլորի անդամ կարող է լինել ելակետային ասել բայը:

⁵ Ա. Սուքիասյան, Հոմանիշները ժամանակակից հայերենում, Եր., 1971, էջ 111:

- ա) ասել, խոսել, պատմել, խոսք բաց անել.
- բ) արտասանել, արտաբերել, ձայնել, կարդալ.
- գ) կարդալ, ընթերցել, ասմունքել, ոգել, հեզել.
- դ) բողոքել, գանգատվել, բողոքարկել, դժգոհել, փնթփնթալ, տրտնջալ.
- ե) գոչել, գոռալ, աղաղակել, աղմկել, բղավել.
- զ) շեշտել, ընդգծել, պնդել, մատնանշել, նշել.
- է) հռչակել, հայտարարել, հրապարակել, տարածել, համարավել, ներ-
բողել, հաղորդել, հայտնել.
- ը) բամբասել, զրպարտել, վատաբանել, շարախոսել, բանսարկել, հեր-
յուրել, շարաբանել, զրախոսել, ասեկոսել.

թ) զրուցել, խոսել, խոսակցել, քչփչալ, փսփսալ և այլն⁶:

Նշելով բայերի իմաստային այս առանձնահատկություններից, իմաստա-
յին խմբերում պետք է առանձնացնել ենթախմբեր, շարքեր, որոնք կարող են
նույնանալ համանիշների շարքերի: Դրանք բոլորն ունեն նույն ընդհանուր
իմաստը, որը կոչվում է ասացական, բայց իմաստային ներքին տարբերու-
թյուններով:

4. Բայի իմաստն անբաժան է ձևից, կազմությունից, հետևաբար պիտի
լուծել նաև այն խնդիրը, թե ինչ կազմության բայեր պետք է նկատի ունենալ:
Ինչպես արդեն ասել ենք, ամենևին պատահական չէ, որ Գ. Ջահուկյանը
իմաստաբանական դասակարգման հիմքում դնում է բայարմատի իմաստը,
քանի որ այն առկա է այդ արմատն ունեցող գրեթե բոլոր բայերում: Այս տե-
սանկյունից բայերը տարբերվում են մյուս խոսքի մասերից կազմության մի-
րինակությամբ՝ բայակերտ -ել, -ալ ածանցներով (նաև -անալ, -ենալ, -նել,
-չել, -վել): Եթե բայակազմական ածանցը նույնն է, բայց բայերն աչքի են
ընկնում իմաստային բազմազանությամբ, ապա դրա պատճառը պիտի փնտ-
րել բայի բառակազմական հիմքի իմաստի մեջ: Ասել, գրվել, փայլել, ծածկել
և ժպտալ, գնալ, խաղալ բայերի իմաստային տարբերությունը արմատական
իմաստի տարբերությունից է (տնկել նշանակում է տունկ անել, հնձել՝ հունձ
անել, էտել՝ էտ անել, վարել՝ վար անել):

Հայերենի բայն ունի բառակազմական մի այլ առանձնահատկություն.
տարբերակում ենք սերող և սերված բայեր: Սերող են պարզ և -անալ, -ենալ,
-նել, -չել, ինչպես նաև -վել կազմության մի քանի բայեր լեզվի արգի փու-
լում: Պարզ է, այս կարգի բոլոր բայերը պետք է ընդգրկվեն իմաստային
դասակարգման ոլորտ: Ինչ վերաբերում է բազմապատկական և -ցն-, -վ-
ածանցներով սերված բայերին, ապա պիտի ասել, որ բազմապատկական
բայերն ըստ էության անվանում են նույն գործողությունը, ինչ սերող բա-
յերը, միայն գործողության բազմապատիկ կատարման երանգով, որն էլ ի-
մաստային ու կապակցական էական նշանակություն չունի: -Ցն- և -վ- ա-
ծանցներով սերված բայերի մասին քիչ հետո:

Ինչպե՞ս վարվել բարդ բայերի հետ:

Համադրական կազմություններից նկատի ունենք այն բարդ բառերը, ո-
րոնց վերջին բաղադրիչը գործածվում է որպես ինքնուրույն բայ (կազմու-
թյան աստիճանականությունը նկատի չունենք): Շատ է նման բայերի թիվը.
ազատագրել, ազատագրվել, ազդուագեծել, ախտահանել, ականապատել, ա-
հաբեկել, ամբապնդել, այլաձևել, անվանակոչել, ասեղնագործել, արագա-
խոսել, արձանագրել, արմատահանել, բանաստեղծել, բառաբարդել, բարե-

⁷ Այս երևույթը բավականին հաճախանում է ցույց է տվել Ժ. Մանուկյանը խոսել բայի
օրինակով:

խոսել, բարեխառնել, բնութագրել, բռնագրավել, գահավիժել, գեղանկարել, գամադրել, գանհկախոսել, դասաբաշխել, դիմահարգարել, զագրախոսել, ինքնախել, ինքնազննել, սղագրել և այլն:

Այս և նման հարյուրավոր բարդ բայեր պահանջում են տարբերակված մատեցում այն առումով, որ տարբեր է բաղադրիչների շարահյուսական հարաբերությունը, հետևաբար և ամբողջ բարդության իմաստը: Մի մասի առաջին բաղադրիչը գոյական է, և բարդության մեջ զգացվում է նրա շարահյուսական իմաստը (ազատագրել, ականապատել, բանաստեղծել, բառարարդել, դասաբաշխել, ինքնազննել և այլն): Այդ բայերը սովորաբար չեն առնում գոյական բաղադրիչի հոլովական իմաստով լրացում, և վերջին բայ բաղադրիչի կապակցական միակ տարբերությունը ամբողջ բայից դա է, ուստի նման բայերը հարկ չկա ընդգրկելու իմաստային խմբերում:

Երկրորդ խմբի բայերի առաջին բաղադրիչը գոյական չէ (ամրապնդել, այլաձևել, արագախոսել, բարեխոսել, բռնագրավել, գոհակախոսել և այլն) կամ գոյական բաղադրիչ է՝ շարահյուսական հարաբերության իմաստը մթազնած, բառը իմաստափոխված է (ախտահանել, ահաբեկել, արձանագրել, բնութագրել և այլն), և բարդ բայը կապակցական առանձնահատկություններով սովորաբար տարբերվում է վերջին բայ բաղադրիչից, հետևաբար նման կազմության բայերը պետք է ընդգրկել իմաստային խմբերում:

Վերլուծական կազմության հարադրավոր բայերը և դարձվածքներն ունեն և՛ իմաստային, և՛ կապակցական տարբերություններ բայական բաղադրիչից՝ առանձին վերցրած, հետևաբար դրանք պետք է ընդգրկվեն իմաստային խմբերում: Բայց քանի որ հարադրավոր բայերի իմաստը պայմանավորվում է և՛ անվանական, և՛ բայական բաղադրիչներով, և չկա որոշակի օրինաչափություն, որն էլ կառաջացնի այնպիսի հարցեր, որոնք կշեղեն ուշադրությունը հիմնական հարցից, ապա նպատակահարմար չէ համադրական կազմությունների հետ կողք կողքի քննել հարադրավոր բայերը: Իսկ դարձվածքներն արտահայտում են բաղադրիչների իմաստից տարբեր իմաստներ, որոնք էլ յուրահատկություններ են մտցնում խմբի իմաստի գնահատման մեջ, որն էլ նորից կառաջացնի լրացուցիչ հարցեր, խնդիրներ, ապա սովորաբար չպետք է ընդգրկել նաև դարձվածքները:

5. Բային բնորոշ այնպիսի քերականական կարգ, ինչպիսին է սեռը, պայմանավորվում է մի կողմից գործողության իմաստով, բնույթով (ներգործական, շեղոք), մյուս կողմից բայի կազմությամբ (պատճառական, կրավորական, մասամբ նաև ներգործական և շեղոք), հետևաբար պիտի պարզվի բայի իմաստ-սեռ, որից էլ բայի իմաստային խումբ-սեռ և բայի կազմություն-իմաստ-սեռ հարաբերակցությունը:

Եթե իմաստային խմբավորման ենթարկվում են սովորաբար սերող բայերը, ապա պատճառական և կրավորական սեռերի բայերը դուրս պետք է մնան քննությունից: Իսկ սեռը, ինչպես սահմանվում է, գործողության և նրա շարահյուսական ակտանտների հարաբերություն է: Քանի որ սեռը մի կողմից նաև բայիմաստով պայմանավորված հասկացություն է, իսկ բայիմաստով է պայմանավորվում նաև բայի կապակցականությունը, ապա բնականաբար չպետք է անտեսվեն պատճառական և կրավորական բայերը: Որպեսզի մեր մտեցումը պարզ լինի, պիտի նկատի ունենանք հետևյալը:

Հայերենի բառարաններում, մասնավորապես բացատրական, արձանագրվում են և՛ սերող, և՛ սերված բայերը համապատասխան հղումներով: Բայց հայտնի է, որ ըստ բառարանագրության ընդունված սկզբունքների քերականական ձևերը առանձին բառարանային միավորներ չեն: Կարելի է եզրակացնել, որ ծեծել և ծեծվել, հեռանալ, հեռացնել և հեռացվել, հիշել, հիշվել, հի-

չեցնել, ճիշեցվել միավորները ակամայից դառնում են ինքնուրույն միավորներ, ինքնուրույն բառեր, իսկ բառը պիտի ունենա բառիմաստ: Հարցի միանշանակ պատասխանը այնքան էլ դյուրին չէ. ա) մի կողմից ունենք բազմաթիվ բայեր, որոնք տարբեր իմաստներով տարբեր սեռի են պատկանում, ընդգրկվելով իմաստային տարբեր խմբերում (անցնել, նայել, ապրել, աշխատել, ծաղկել, սովորել և այլն), բ) մյուս կողմից ներգործական բայերից սերված կրավորականները և՛ կրավորական են, և՛ շեղոք, գ) կան բազմաթիվ բայեր, որոնք -ցն- և -վ- ածանցներով ձեռք են բերում նոր իմաստ սերողների համեմատությամբ, լրացուցիչ բառական իմաստ (վերաբերել-վերաբերվել, ազատել-ազատվել, սևանալ-սևացնել, ազդել-ազդվել, հայտնել-հայտընվել, մերկանալ-մերկացնել և այլն), դ) մնացած բայերի ցույց տված գործողությունն օտարում են քերականական ենթակայից, առաջացնում կապակցական տարբերություններ, փոփոխություններ և՛ խորքային, և՛ մակերեսային կառուցվածքներում, ե) կան բայեր էլ, որոնք նույնարմատ են, ունեն նույն բառակազմական հիմքը, բայց տարբերվում են բառակազմական ածանցներով, և կազմության տարբերություններն առաջացնում են և՛ իմաստի, և՛ սեռի, և՛ կապակցական տարբերություններ (սեղմել և սեղմանալ, նեղել և նեղանալ, քարել և քարանալ և այլն):

Հիշյալ հանգամանքները ցույց են տալիս, որ սերված բայերի նկատմամբ պետք է ունենալ տարբերակված մոտեցում: Այն բայերը, որոնք սերված են -ցն-, -վ- ածանցներով և բառական իմաստով տարբերվում են սերող բայից, պետք է ընդգրկել իմաստային խմբերում: Իսկ այն բայերը, որոնց տարբերությունը սերող բայերից սոսկ սեռային է և ոչ իմաստային, պետք է անտեսել: Բայց վերևում ասացինք, որ բայերի իմաստային դասոդասումը ինքնանպատակ չէ, դրանով պիտի պարզվեն բայիմաստի և շարահյուսական-կապակցական կարողությունն առնչությունները, իսկ պատճառական և կրավորական բայերը սերող բայերից ունեն կապակցական տարբերություններ, ապա ինչքանով է հիմնավորված դրանք անտեսելը:

Ճիշտ է, -ցն- և -վ- ածանցները թեև գործողությունն օտարում են քերականական ենթակայից, առաջացնում են կապակցվող միավորների ոչ միայն մակերեսային, այլև խորքային կառուցվածքների փոփոխություն, բայց ըստ էության մի կողմից բայի իմաստային լրացումները մնում են, մյուս կողմից այդ փոփոխությունը ոչ թե իմաստային այս կամ այն խմբին բնորոշ առանձնահատկություն է, այլ ընդհանուր, բոլոր բայերին բնորոշ, հետևաբար ոչ տարբերակիչ, ապա, բնականաբար, հարկ չկա պատճառական և կրավորական սերված բոլոր բայերն ընդգրկել իմաստային խմբերում: Չպետք է մոռանանք նաև մի ուրիշ կապակցական երևույթ. տարբեր խոսքի մասերի նույնարմատ բառերն իրարից տարբերվում են ոչ միայն բառական, այլև խոսքիմասային իմաստներով, բայց դա չի խանգարում, որ նրանք ընդհանուր արմատական իմաստով պայմանավորված, առեն նույն լրացումները, ինչպես տեից հեռու, հեռանալ և հեռացում, հարցին մտտ, մտտենալ և մտեցում, ծագվամբ հպարտ, հպարտանալ և հպարտություն, գրույց և գրուցել պատերի մասին:

6. Եվ, վերջապես, պետք է լուծել բայերի իմաստային խմբերի անվանումների բավականին բարդ հարցը: Պետք է գտնել ընդհանրացնող մի այնպիսի անվանում, որ ընդգրկի երբեմն մի քանի տասնյակ բայերի բնորոշ իմաստը, ինչպես յուրյց տվեցինք ասացական բայերի օրինակով: Բայերի իմաստային խմբերն անվանող տերմինների միօրինականություն հնարավոր չէ այն առումով, որ որոշ խմբերի անուններ բարեհունչ են, նպատակահարմար և ընդունելի բայանուն գոյականներով, մյուսները՝ ածականներով, եր-

որողները՝ անորոշ դերբայով, բոլոր դեպքերում անվանման հիմքում դնելով այն ելակետային իմաստը, որը ընդհանուր է իմաստային տվյալ խմբի մեջ դասվող բոլոր բայերին:

Թվարկենք հայերենի բայերին բնորոշ իմաստային խմբերը, կողքին նըշելով ելակետային բայերը (բայը). աւացական (ասել, խոսել), մտածական (մտածել), հոգեկան ապրում, զգացում (զգալ), վերաբերմունքի (գովել, ամբաստանել), կամֆի, ցանկության (կամենալ, ցանկանալ), խնդրանքի (խընդրել), հարկադրման, դրդման (հարկադրել, դրդել), հանգման (բուն հանգման-հանգել, մերձեցման-մերձենալ, մատուցման-մատուցել), բաժանման-անջատման (բաժանել, անջատել), շարժման (շարժել, գնալ), ծածկել, պատել (ծածկել), կառուցման, արարման (կառուցել, արարել), փանդման, ավերման (քանդել, ավերել), կապել, ամրացնել (կապել), բռնել-փակել (բռնել, փակել), հարվածի (հարվածել, խփել), պայքարի, ընդդիմության (պայքարել), վաստակման, հաստատման (հաստատել), ավարտի, ամփոփման (ավարտել, ամփոփել), հավաքման-կուտակման (հավաքել), բնակվել-տեղավորվել (բնակվել, ապրել), սովորել, վարժվել (սովորել, վարժվել), փնտրել-գտնել (փնտրել, գտնել), ձայնել-կանչել (ձայնել), գունային (կարմրել, դեղնել), ուտել-խմելու (ուտել, խմել), փոփոխման-վերածման (փոփոխել, վերածել), այրման (այրել), բուժման (բուժել), բնության երևույթներ (լուսանալ), զբաղմունքի (թագավորել), վերացական (լինել), վատնում, սպառում (վատնել), սպասման (սպասել), տարածման (տարածել), սանել-շվել (սահել), փորել (փորել) և այլն:

Այսքան խմբեր առանձնացնելով հանդերձ ասենք, որ որոշ բայեր ունեն յուրահատուկ իմաստ, որն էլ հնարավորութիւն չի տալիս ընդգրկելու իմաստային որևէ խմբում, ինչպես՝ բանալ, բացակայել, բուրել, զինել, քերթել, ծխել, կշռել, խոտանել, նվագել, շարունակել, պատծել, պայտել և այլն:

Г. А. АРУТЮНЯН—Принципы семантической классификации глаголов.— Семантическая классификация частей речи одна из первоочередных задач современной лингвистики. Анализ принципов семантической классификации глаголов выясняет, что более результативным и целесообразным является тематическая группировка, при которой выделяются группы глаголов речи. движения, деления, приближения, давания, противостояния. окончания, принуждения, построения и др. По этому принципу глаголы группируются не только в соответствии со смыслом, но с особенностями сочетаемости, обусловленные внутричастеречным значением.